

**Տ. ՓԱՌԷՆ ԵՊԻՄԿՈՊՈՍ ԱԲԵՏԻՔԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՕՍՈՒՄԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՈՒՄԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(16 Յունուարի 2005 թ.)

*«Ուրախ լերուք երկինք եւ ցնձասցէ երկիր,
զոչեացն լերինք զցնձութիւն եւ բլուրք զար-
դարութիւն, զի ողորմեցաւ Աստուած ժողո-
վըրդեան իւրում, եւ զխոնարհս ժողովրդեան
իւրոյ մխիթարեաց»:*

(Եսայի ԽԹ. 13)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը որոշած է ի մի բերել մեզ բոլորս այսպեղ, այս Սուրբ Տաճարին, Հայաստանեայց Եկեղեցւոյ Սրբութիւն Սրբոցին մէջ, միասնաբար վերյիշելու, խոկալու, ոգեկոչելու եւ խնդրելու հոգւոց խաղաղութիւն, զոհերուն համար Հնդկական Ովկիանոսի Ձունամիին, որ պատահեցաւ 2004 թուականի դեկտեմբեր 26-ին, ինչպէս նաեւ աղօթելու բարօրութեան եւ վերականգնման համար անոնց, որոնք աղէտէն ճողոպրեցան:

Դժբախտութեան ծաւալը եւ փարոզութիւնը մարդ արարածի չափելու, նկարագրելու եւ արձանագրելու կարողութենէն գերիվեր է, նոյնիսկ համայնապարկերը ներընդգրկելու ընդունակութեամբ օժտուած նկարչական գործիքներ, ձախողեցան փորձաքննութիւնը, որուն ննթարկուեցան: Բայց աւելի քան երկրի աւերումն ու կործանումը, մարդու հոգին է փութած, ճնողներու կամ զաւակներու կորուստին եւ սարսափի յիշողութեան պարճառաւ, որոնք ամէնքը անջնջլիօրէն արձանագրուած են չափացած եւ զգայուն մաշկին վրայ անոր սըրփին:

Որպէս ժողովուրդ մը որ իր կարգին վերապրած է բազում արհաւիրքներ եւ ճաշակած շար մը կործանումներու դառնութիւնը իր պարմութեան ընթացքին, հայ ժողովուրդը ձեռք է բերած հակումը եւ խառնուածքը, կիսելու սուզը եւ կորուստը բոլոր այն ժողովուրդներուն, որոնք Ձունամի բնական աղէտի հետեւանքներէն ազդուած են: Վերջապէս, շար հեռու անցեալի մը մէջ չէր, երբ մեր ժողովուրդը դիմագրաւեց գրեթէ ամբողջական անճիւղում եւ բնաջնջում, Օսմանեան Թուրքերու ձեռքով, կամ փասնետօք փարիսերը այնքան երկար չեն, որպէսզի ժողովուրդ մը իր յիշողութեան գիպակցութենէն ջնջէ արհաւիրքը Երկրաշարժին, որ գրեթէ հողին հաւասարեցուց ամբողջ Հիւսիսային Հայաստանը: Մեր երկիրը փակաւին կը ճաշակէ հետեւանքները ցնցումին եւ փակնուկրայութեան, որ փռի ունեցաւ իր փարածքին վրայ: Ցաւօք, երկար պիտի րեւէ անոր ամբողջական վերականգնումը:

Մեր պարմութեան, ուստի ձեռք բերած մեր նկարագրի գիծին պարճառաւ, որ մեզ ըրած է օժտուած ուրիշներու հանդէպ համակրանքով, մենք մեղմօրէն կը մատուցենք մեր ուսը, թէ՛ որպէս յենարան եւ թէ՛ որպէս փափուկ ապաստան, հանգչեցնելու համար գլուխը

եւ արքայապետութիւնը բոլոր անոնց, որոնք կարիքն ունին ողբալու: Փորձուած եւ վարահ կերպով, կ'երկարենք ամբօրէն մեր ձեռքը բարեկամաբար, հաւատարմութեամբ անոնց, որոնք բռնութեամբ են, թէ վերականգնումը թէն դանդաղ, բայց անպայման եւ ապահովաբար տեղի պիտի ունենայ: Եւ մենք ամենայն բացարարութեամբ կը բանանք մեր գիրկը հայրական եւ եղբայրական գրկախառնումի մը համար, անոնց, որոնք գրկուած են այդ գողտրիկ եւ գորովալի փորձառութենէն, սիրելիներու կորստեան կամ մահուան պարտաւորումով:

Անկախ այս ոգեկան սրբակցութեան արքայապետութիւններէն, անոնց հանդէպ, որոնք կը փառապանեն, մենք նաեւ կը նշենք մեղմ բաւարարութեամբ իրողութիւնը թէ, հակառակ մեր երկրին մէջ փրկող պայմաններուն, Նայաստանի Կառավարութիւնը որոշած է իր լուսնային ձգել յարաճուն հանգանակութեան պնակին մէջ, գոր համաշխարհային ընկերութիւնը հովանաւորած եւ կարգաւորած է, ի նպաստ վերապրած ժողովուրդի եւ ազգութեանց, որոնք բռնութեամբ են Նոյնական Ուկրաինայի շունամիէն: Մենք նաեւ կ'արձանագրենք մասնաւոր հպարտութեամբ այն իրողութիւնը, թէ մեր ժողովուրդի զաւակները, որոնք կ'ապրին աշխարհով մէկ զանազան վայրերու, առաւել ունեւոր ընկերութիւններու մէջ, ցուցաբերած են հոգեկան առաքաճեռնութիւն, մասնակցելով իրենց կարողութեանց չափով, աշխարհասփիտ այն ջանքերուն, որոնք նախաձեռնուած են կառավարութեանց եւ միջազգային նպաստաւորող կազմակերպութեանց կողմէ:

Չունամին, ինչպէս բոլոր բնական աղէտները, կը յարուցեն բազում հարցադրումներ, թէ՛ աստուածաբանական, թէ՛ երկրաբանական, թէ՛ բնակլիմայական եւ թէ՛ բնապահպանական: Այս պարահարներուն պարտաւորում, մարդուն հաւաքը Աստուծոյ եւ իր սրբեղծագործութեան բարի ըլլալուն նկատմամբ, կրնայ խախտիլ: Մենք կարող ենք մեր մարտնչութիւնը ազատ արձակել, դեգերելու ինչպէս եւ կամի, առանց յուսալու որ կը հասնինք փրամաբանական, բայց նաեւ հաւարքի վրայ խարսխուած, բացարարութեան: Բայց անկախ այն բանէն թէ ինչ կ'ըլլան պարասխանները, առանց վարանելու նշենք, թէ բնական աղէտները Աստուծոյ պարտաւորում չեն: Որովհետեւ մենք կը հաւատանք Աստուծոյ եւ բարիի համագործութեան, Աստուծոյ բնածին բարութեան, ինչպէս նաեւ մարդուն հետ Աստուծոյ կնքած ուխտին, երբեք չպարտեմ մարդը դարձեալ ջրհեղեղով կամ այլ բնական աղէտով: Այլ կողմէ դիտուած, մենք մեր ամբողջական հաւանութիւնը կուրանք այն փեսութեան, առաջադրուած իմաստաստր Էմմանուել Քանդի կողմէ, թէ մարդը դաս կ'առնէ, պէտք է դաս առնէ իր յիմարտութենէն: Վերջ ի վերջոյ, իմացականութիւնը եւ իմաստութիւնը Աստուծոյ կողմէ մարդ էակին շնորհուած մեծագոյն փառութիւններն են: Մարդուն հնարամտութիւնը, դիմագրաւելու իր միջավայրին սրբեղծած բոլոր խնդիրները, Աստուծոյ պարգեւն է մարդուն, ինչպէս նաեւ է միաժամանակ, պարտականութիւն եւ իրաւանգ:

«Ձի ամենայն փութք բարիք եւ ամենայն պարգեւ կարտեալք ի վերուստ են իջեալք առ ի Քէն, որ եւ Նայր լուսոյ...» այն գովաբանութիւնն է գոր մենք կը գտնենք Նայաստանեայց Եկեղեցոյ Ս. Պարարագին մէջ, որ այսօր կուգայ դարձեալ յուշելու մեզի, թէ մարդը աշխարհի մէջ, Աստուծոյ բարին իրագործելու գործիքն է: Մենք ենք որ կը կիրարկենք եւ կ'իրագործենք Աստուծոյ նպատակները այստեղ, այս աշխարհի վրայ: Եթէ մեր եղբայրը կարիքի մէջ է, անկախ անոր կրօնական համոզումներէն, կարեկցութեան ալիքը որ կը ծա-

լալի մեր սրբերուն մէջ, կը ձեւափոխուի հոգածու խնամքի, սափարումի կերպին փակ, փնտասակի, գումարի եւ ծառայութեան ձեւերով:

Նոյնական Ուկրաինոսի Ձունամին, հակառակ այն իրողութեան, որ ան անսահման փարողութեան աղէր մըն էր, ի լոյս աշխարհ բերաւ մարդուն մէջ, լոյնքան անսահման կամեցողութիւն մը, ըլլալու իր եղբօր հանդէպ հոգածու եւ պահապան: Անոր սափար կանգնիլ, փրկել գայն յաւելեալ աւերածութենէ եւ փառապանքէ, օգնել անոր բուժելու իր վերքերը, վերակառուցել անոր խորքակուած կեանքն ու բնակարանը եւ փրամադրել անոր միջոցները պարտաստուելու, կանխարեսելու եւ խափանելու համար յաւելեալ կործանումներ, փրկադրելով Ձունամիի գգուշացման յառաջանկար համակարգ, եղաւ արձագանքը մարդկութեան:

«Ուրախ լերուք երկինք եւ ցնձացէ երկիր, գոչեցնել լերինք գցնութիւն եւ բլուրք գարդարութիւն, զի ողորմեցաւ Աստուած ժողովրդեան Իւրում, եւ զխոնարհս ժողովրդեան Իւրոյ մխիթարեաց»: Այս է Եսայի մարգարէի օրհներգութիւնն ու խոստումը մնգի:

Թող Տէրը օրհներգուի մարդուն փուած Իր բազում պարգևներուն համար:

Թող Տէրը օրհներգուի Իր մարդը ընտրած ըլլալուն համար, որպէս Իր գործակալարը, մարդոց միջեւ բարի կամեցողութիւն հաստատելու նպատակով:

Թող Տէրը օրհներգուի Իր գթասրտութեան, Իր ողորմածութեան եւ Իր հոգածութեան համար անոնց հանդէպ որոնք կը փառապան Նոյնական Ուկրաինոսի Ձունամիի հետեւանքներուն պարճառաւ:

Թող Տէրը օրհներգուի Իր յախտնական հոգածութեան համար Իր ծառաներու հոգիներուն հանդէպ, որոնք մահացան Նոյնական Ուկրաինոսի վայրագ Ձունամիին պարճառաւ:

Եւ թող Տէրը օրհներգուի Իր մշտնջենական բարութեան համար, յախտնանս յախտնանից: Ամէն: